

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԻՍՔԵՐԸ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍՈՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Արսեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Երևան քաղաքի դատախազության դատախազ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2011 թ. մարտի 10-ի թիվ 9 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ) 1.18-րդ կետը հռչակում է, որ Նախագիծը բնութագրվում է մի շարք հիմնարար, սկզբունքային նորամուծություններով, որոնք պետք է էապես բարելավեն, կատարելագործեն քրեադատավարական գործող համակարգը և նպաստեն քրեական արդարադատության արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես նախատեսվում է քրեական հետապնդման հարուցում համարել դատախազի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի կայացրած որոշումը հաստատելը՝ այդ պահին ընդունելով որպես չափանիշ անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի հիմնական միջոցներ կիրառելու և դատավարական հիմնական ժամկետները հաշվարկելու համար¹: Այնուհետև Հայեցակարգի 3.14-րդ կետում նշվում է, որ եթե անձը ներգրավվել է որպես մեղադրյալ, սակայն թաքնվում է քննությունից, կամ նրա գտնվելու վայրը հայտնի չէ, քրեական հետապնդման ժամկետը կարող է կասեցվել մինչև անձին հայտնաբերելը: Անձի ի հայտ գալուց հետո քրեական հետապնդման ժամկետը վերսկսվում է: Եթե նախաքննության ժամանակ հանցանք կատարած անձը չի հայտնաբերվում, ժամկետը հոսում է մինչև քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ավարտը:

Մեջբերված դրույթների բովանդակությունից հետևում է, որ Հայեցակարգում արմատական նոր մոտեցում է ցուցաբերվել քրեական գործով վարույթի կասեցման ինստիտուտի նկատմամբ: Այսպես, եթե գործող քրեական դատավարության օրենսգրքը ելնում է քրեական գործով վարույթի ժամկետային սահմանափակման մոդելից, որի պայմաններում այդ սահմանափակումները դրվում են վարույթի հարուցման (քրեական գործի հարուցման) պահից՝ անկախ կասկածյալի կամ մեղադրյալի ներգրավումից, ապա Հայեցակարգը ելնում է վարույթի ժամկետային սահմանափակման այն մոդելից, որ քանի դեռ չի հարուցվել քրեական հետապնդում, և վարույթ չի ներգրավել մեղադրյալը, վարույթի ընթացքում որևէ ժամկետային սահմանափակում դրվել չի կարող: Այս մոդելի պայմաններում վարույթի ժամկետային սահմանափակման իրավաչափ նպատակ է դիտվում մեղադրանքի՝ որպես միջանկյալ վիճակի տևողության ողջամտության երաշխավոր-

¹ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 6-րդ հոդվածի 41-րդ կետում քրեական հետապնդում հարուցելը բնորոշվում է որպես դատախազի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելը կամ ենթադրյալ տուժողի կողմից դատարան քրեական հայց ներկայացնելը:

րունը և ոչ թե ինքնին քրեական վարույթի տևողության ողջամտության ապահովումը: Այսպիսով, նոր մոդելով քրեական գործով վարույթի կասեցումը փոխարինվում է քրեական հետապնդման ժամկետների կասեցումը²:

Հայեցակարգի պահանջներին համահունչ՝ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) «Հանրային քրեական հետապնդումը» վերտառությունը կրող 26-րդ գլխում ամրագրվել են քրեական հետապնդման ժամկետների կասեցման ինստիտուտը կազմող դրույթները, որոնք համապատասխանաբար նախատեսվել են 196-198-րդ հոդվածներում:

Քրեական հետապնդման ժամկետների կասեցման հիմքերը սահմանված են Նախագծի 196-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ «Մինչդատական վարույթում սույն օրենսգրքի 194-րդ հոդվածով նախատեսված քրեական հետապնդման ժամկետները³ կասեցվում են սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին քննիչի միջնորդության հիման վրա դատախազի կողմից որոշում կայացնելու պահից»:

Իսկ սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդման ժամկետը կարող է կասեցվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝

- 1) մեղադրյալի գտնվելու վայրն անհայտ է.
- 2) մեղադրյալի մոտ առկա է ծանր հիվանդություն, որը նրան տևական ժամանակով գրկում է վարույթին մասնակցելու հնարավորությունից.
- 3) մեղադրյալը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու պատճառով չի կարող մասնակցել վարույթին կամ խուսափում է վարույթին մասնակցելուց.
- 4) մեղադրյալի հետ կնքվել է համագործակցության համաձայնագիր.
- 5) գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է հետագա վարույթի իրականացումը»:

Հիշյալ հոդվածում նախատեսված քրեական հետապնդման ժամկետների կասեցման հիմքերի պարզ թվարկումից ակնառու է դառնում, որ Նախագծում, ի տարբերություն գործող քրեական դատավարության օրենսգրքի, իր արտացոլումը չի ստացել քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու այնպիսի հիմք, ինչպիսին որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելն է (31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), և գործող օրենսգրքի համեմատությամբ սահմանվել է նոր հիմք, այն է՝ մեղադրյալի հետ կնքվել է համագործակցության համաձայնագիր: Բացի դրանից, Նախագծում կասեցման առանձին հիմքեր ներկայացվել են նորովի:

Նախագծում տեղ գտած կասեցման հիմքերի շարքում որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելու հիմքի հանված լինելը ամենից առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ Նախագծում քրեական գործով վարույթի կասեցումը,

²Տե՛ս **Ա. Մարտիրոսյան**, Քրեական հետապնդումը կասեցնելու ինստիտուտը ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // Դատական իշխանություն, 2013, թիվ 4(165), էջ 66:

³Նախագծի 194-րդ հոդվածի համաձայն՝ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելին, քան՝ 1) երկու ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով, 2) չորս ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով, 3) ութ ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով, 4) տասը ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով: Բացառիկ դեպքերում, եթե դա է պահանջում արդարադատության շահը, նշված ժամկետները վերադաս դատախազի կողմից կարող է երկարացվել առավելագույնը երկու ամսով:

ինչպես արդեն վերը նշվեց, փոխարինվել է քրեական հետապնդման ժամկետների կասեցմամբ: Իսկ քրեական հետապնդման ժամկետները սկսում են հոսել անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու պահից: Հետևաբար, քանզի դեռ չի պարզվել քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձը, և նրա նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել, քրեական հետապնդման ժամկետների մասին խոսք լինել չի կարող: Այսինքն, տվյալ պարագայում քննությունը շարունակվում է մինչև համապատասխան հանցագործության համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի լրանալը:

Նախագծի 196-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված քրեական հետապնդման ժամկետների կասեցման հիմքերից առաջինը մեղադրյալի գտնվելու վայրի անհայտ լինելն է: Դրանից բացի, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում որպես քրեական հետապնդման ժամկետների կասեցման ինքնուրույն հիմքեր նախատեսված են մեղադրյալի` Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելը և վարույթին մասնակցելուց խուսափելը:

Նախագծի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի վերլուծությունից հետևում է, որ դրանցում նախատեսված են քրեական հետապնդման ժամկետների կասեցման հարաբերականորեն ինքնուրույն երեք հիմքեր.

1. մեղադրյալի գտնվելու վայրի անհայտ լինելը,
2. մեղադրյալի` Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելը,
3. մեղադրյալի` վարույթին մասնակցելուց խուսափելը:

Նշված հիմքերի հստակ տարանջատումը կարևոր գործնական նշանակություն ունի, քանի որ դրանցից յուրաքանչյուրի հիման վրա քրեական հետապնդման ժամկետների կասեցումը կարող է առաջացնել քրեաիրավական և քրեադատավարական տարբեր հետևանքներ: Ցավոք սրտի, պրակտիկայում շատ հաճախ նախաքննության մարմինների կողմից տարբերություն չի դրվում թվարկված հիմքերի միջև, և յուրաքանչյուր դեպքում մեղադրյալի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը մեկնաբանվում է որպես վերջինիս կողմից քննությունից խուսափել: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է բացահայտել կասեցման այդ հիմքերից յուրաքանչյուրի բովանդակությունը և ներկայացնել դրանց սահմանազատման հիմնական չափանիշները:

1) Մեղադրյալի գտնվելու վայրի անհայտ լինելու հիմքով քրեական հետապնդման ժամկետները կասեցնելը: Ի տարբերություն Նախագծի` ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում այս հիմքը ձևակերպված է հետևյալ կերպ` մեղադրյալի գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ: Կարծում ենք, որ բովանդակային առումով տարբերություն չկա Նախագծում և գործող օրենսգրքում օգտագործվող «մեղադրյալի գտնվալու վայրի անհայտ լինելու» և «մեղադրյալի գտնվելու վայրը այլ պատճառներով պարզված չլինելու» հասկացությունների միջև:

Թեև Նախագծում որպես քրեական հետապնդման ժամկետների կասեցման ինքնուրույն հիմք նախատեսվել է մեղադրյալի գտնվելու վայրի անհայտ լինելը, սակայն դրանում որևէ ձևով բացահայտված չէ այդ հիմքի բովանդակությունը, և առաջին հայացքից կարծես թե այն նույնացվում է մեղադրյալի վարույթին մասնակցելուց խուսափելու հիմքի հետ: Սակայն, ինչպես կնկատենք ստորև, դա միայն առաջին հայացքից է այդպես թվում:

Դատավարական իրավունքի տեսության մեջ մեղադրյալի գտնվելու վայրի անհայտ

լինելու հիմքը տարբեր դատավարագետներ մեկնաբանում են տարբեր կերպ: Այսպես, Մ. Գ. Ռեշնյակի կարծիքով՝ «այլ պատճառ» ասելով պետք է հասկանալ այն օբյեկտիվ հանգամանքները, որոնք խոչընդոտում են մեղադրյալի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունների ստացմանը: Օրինակ, մեղադրյալի անսպասելի հոսպիտալացումը, նրա մահը, մեղադրյալի բարեխիղճ մոլորությունը իր դատավարական կարգավիճակի վերաբերյալ և այլն: Այլ կերպ՝ բնակության վայրի փոփոխությանն ուղղված մեղադրյալի գործողությունները կրում են ոչ դիտավորյալ բնույթ⁴:

Է. Ֆ. Ջակիրովայի կարծիքով՝ «քրեական գործով վարույթը կասկածյալի կամ մեղադրյալի գտնվելու վայրը այլ պատճառներով պարզված չլինելու հիմքով կասեցվում է ոչ միայն այն դեպքում, երբ նախաքննության և հետաքննության մարմինները չունեն տեղեկություններ հանցագործություն կատարած անձի գտնվելու վայրի վերաբերյալ, այլ նաև այն դեպքում, երբ ինքը՝ հետախուզվողը, չի գիտակցում իրեն քրեական պատասխանատվության ենթարկելու իրական հնարավորության մասին»⁵:

Վ. Պ. Ռուկավիշնիկովը, Ս. Ի. Անենկով և Ն. Ա. Գրոմովը գտնում են, որ մեղադրյալի գտնվելու վայրը այլ պատճառներով պարզված չլինելուն վերաբերում է նաև մեղադրյալի՝ երկարատև գործուղման հետևանքով պետական սահմաններից դուրս գտնվելը⁶: Նշված տեսակետի հետ դժվար է համաձայնվել, քանի որ այս դեպքում քննիչը գործուղում իրականացնող մարմնի միջոցով հեշտությամբ կարող է բացահատել մեղադրյալի գտնվելու վայրը, և նույնիսկ հնարավոր է կապ հաստատել նրա հետ: Կարծում ենք, որ նշված դեպքում քրեական հետապնդման ժամկետը պետք է կասեցնել մեղադրյալի՝ Չայաստանի Չանրապետության սահմաններից դուրս գտնվելու հիմքով (Նախագծի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ):

Ներկայացված տեսակետներից ելնելով՝ կարելի է հանգել այն հետևության, որ մեղադրյալի գտնվելու վայրը անհայտ լինելու հիմքով քրեական հետապնդման ժամկետները պետք է կասեցվեն այն դեպքում, երբ քրեական վարույթի ընթացքում որոշակի օբյեկտիվ պատճառներով հնարավոր չի եղել տեղեկություններ ստանալ վերջինիս գտնվելու վայրի վերաբերյալ, և չկան փաստական տվյալներ, որոնք կվկայեն, որ նա խուսափում է քննությունից:

2) Մեղադրյալի՝ Չայաստանի Չանրապետության սահմաններից դուրս գտնվելու հիմքով քրեական հետապնդման ժամկետները կասեցնելը: Եթե Նախագծի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով քրեական հետապնդման ժամկետները կասեցնելիս չպետք է պարզված լիներ մեղադրյալի գտնվելու վայրը, ապա այս դեպքում արդեն հայտնի է նաև մեղադրյալի գտնվելու վայրը, սակայն Չայաստանի Չանրապետության սահմաններից դուրս գտնվելու պատճառով հնարավոր չէ նրա մասնակցությունը քրեական վարույթին: Ընդ որում, *հանրապետության սահմաններից դուրս մեղադրյալի գտնվելը չպետք է հանդիսանա քննությունից խուսափելու հետևանք: Չակառակ դեպքում քրեական հետապնդման ժամկետները պետք է կասեցվեն մեկ այլ՝ մեղադրյալի*

⁴ Տե՛ս *Решняк М. Г.* Деятельность следователя и органа дознания по розыску и установлению местопребывания обвиняемого. Дисс. канд. юрид. наук. М., 1998, էջ 42:

⁵ *Закирова Э. Ф.* Приостановление предварительного следствия в случае, когда подозреваемый или обвиняемый скрылся от следствия либо место его нахождения не установлено по иным причинам: Автореф. дисс. канд. юрид. наук. Ижевск, 2004, էջ 19-20:

⁶ Տե՛ս *Рукавишников В. П., Анненков С. И., Громов Н. А.* Понятие, основания и условия приостановления предварительного расследования //Следователь, 2001, № 3, էջ 19:

վարույթին մասնակցելուց խուսափելու հիմքով:

Գործնականում հաճախ մեղադրյալի՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու հիմքը նույնացվում է մեղադրյալի՝ վարույթին մասնակցելուց խուսափելու հիմքի հետ: Այսպես, Ա-ի կողմից խարդախություն կատարելու փաստի առթիվ հարուցված քրեական գործով նախաքննության մարմնի կողմից որոշում է կայացվել վերջինիս որպես մեղադրյալ ներգրավելու, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով գործով վարույթը կասեցնելու և Ա-ի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ա-ն գտնվում է ՌԴ Կրասնոդար քաղաքում: Սակայն մինչև քրեական գործով վարույթը կասեցնելը և մեղադրյալի նկատմամբ հետախուզում հայտարարելը նախաքննության մարմնը հեռախոսազրույց է ունեցել նրա հետ, որի ընթացքում մեղադրյալը ճշգրիտ հայտնել է իր գտնվելու և փաստացի բնակության հասցեն և տեղեկացրել, որ ինքը քննությանից չի թաքնվում և առաջին հնարավորության դեպքում կներկայանա նախաքննության մարմնին⁷:

Բերված օրինակից ակնառու է դառնում, որ նման պայմաններում նախաքննության մարմնի կողմից քրեական գործով վարույթի կասեցման հիմքը սխալ է ընտրվել, քանի որ, ըստ գործի տվյալների, մեղադրյալի գտնվելու վայրը հայտնի է եղել:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս մեղադրյալի գտնվելու հիմքով քրեական հետապնդման ժամկետների կասեցման համար միաժամանակ պարտադիր կարգով պետք է առկա լինեն հետևյալ պայմանները. ա) *մեղադրյալը պետք է գտնվի ՀՀ սահմաններից դուրս, ընդ որում՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելը չպետք է քննությունից խուսափելու նպատակ հետապնդի*, բ) *առանց մեղադրյալի մասնակցության հետագա քրեական վարույթը պետք է անհնար լինի*⁸:

3) Մեղադրյալի՝ վարույթին մասնակցելուց խուսափելու հիմքով քրեական հետապնդման ժամկետները կասեցնելը: Մասնագիտական գրականության մեջ մեղադրյալի վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վերաբերյալ տարբեր մոտեցումներ են արտահայտվել: Այսպես, Ն. Ա. Յակուբովիչի կարծիքով՝ թաքնվելու դեպքում մեղադրյալի գործողությունները կրում են գիտակցական, դիտավորյալ բնույթ և հատուկ ուղղված են իրեն հայտնաբերելու գործընթացի դժվարեցմանը⁹:

Այն դեպքում, երբ մեղադրյալը գիտակցաբար չի ձեռնարկում ակտիվ գործողություններ քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով, չի կարելի խուսել վերջինիս քննությունից կամ դատից թաքնվելու մասին¹⁰:

Ա. Ս. Պոպովը գտնում է, որ «մեղադրյալի՝ քննությունից թաքնվելու տակ պետք է հասկանալ հանցագործություն կատարած անձի դիտավորյալ, ակտիվ գործողությունները՝ ուղղված իրավապահ մարմիններից թաքնվելուն՝ նպատակ ունենալով խուսափելու

⁷ Նախաքննության տվյալները չիրապարակելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մեղադրյալի տվյալները և քրեական գործի առանձին մանրամասներ չեն ներկայացվում:

⁸ Տե՛ս Ա. Մարտիրոսյան, Քրեական գործով վարույթի կասեցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում: Մեմոարթություն, Եր: Տիգրան Մեծ հրատ., 2012, էջ 153:

⁹ Տե՛ս *Бердичевский Ф. Ю., Якубович Н. А.* Приостановление предварительного следствия. М.-1974, էջ 10:

¹⁰ Տե՛ս *Репкин Л. М.* Приостановление предварительного следствия. - Волгоград: Изд-во ВСШ МВД СССР, 1971, էջ 15:

քրեական պատասխանատվությունից»¹¹:

Է. Ֆ. Ջակիրովայի կարծիքով՝ «քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու մասին կարելի է խոսել միայն այն պայմաններում, երբ կասկածյալը կամ մեղադրյալը գիտակցաբար իրականացնում են ակտիվ գործողություններ՝ ուղղված այն բանին, որ իրենց չգտնեն: Նշված անձինք պետք է հասկանան, որ իրենց որոնում են հանցագործություն կատարելու համար, իսկ իրենք, նպատակ ունենալով խուսափել քրեական պատասխանատվությունից, ձեռնարկում են միջոցներ, որպեսզի իրենց գտնվելու վայրը չպարզվի: Եթե անձը գտնում է, որ իր մասնակցությունը հանցագործության կատարմանը չի պարզվել, և փոխում է իր բնակության վայրը, չի կարելի խոսել այն մասին, որ նա թաքնվում է քննությունից»¹²:

Մեջբերված տեսակետներից հետևում է, որ *մեղադրյալի՝ վարույթին մասնակցելուց խուսափելու բովանդակությունը կազմում են անձի կողմից կատարվող դիտավորյալ գործողությունները, որոնք ուղղված են քրեական հետապնդում իրականացնող մարմնի տեսադաշտից դուրս գտնվելուն: Այսինքն՝ խուսափելը ենթադրում է մեղադրյալի այնպիսի գործողություններ, որոնցով նա փորձում է չնկատվել վարույթն իրականացնող մարմնի կողմից, խափանել իրեն հայտնաբերելուն ուղղված գործողությունները:*

Ինչպես արդեն նշվեց վերևում, Նախագծի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերում նախատեսված հիմքերից յուրաքանչյուրի հիման վրա քրեական հետապնդման ժամկետների կասեցումը կարող է առաջացնել *քրեաիրավական և քրեադատավարական տարբեր հետևանքներ*: Այսպես, երբ քրեական հետապնդման ժամկետները կասեցվում են մեղադրյալի՝ վարույթին մասնակցելուց խուսափելու հիմքով, ապա այս դեպքում քրեական հետապնդման ժամկետների կասեցման հետ միաժամանակ կասեցվում են նաև քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից:

Իսկ քրեական հետապնդման ժամկետները մեղադրյալի գտնվելու վայրը անհայտ լինել հիմքով կասեցնելիս միաժամանակ չի կասեցվում քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, քանի որ մեղադրյալի գտնվելու վայրը պարզված չլինելը չի կարող մեկնաբանվել, որ մեղադրյալը թաքնվում է քննությունից, և հետևաբար չի կարող քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը կասեցնելու հիմք հանդիսանալ:

Մեղադրյալի՝ քննությունից խուսափելը ունի նաև կարևոր քրեադատավարական նշանակություն: Այն փաստը, որ մեղադրյալը խուսափում է քննությունից, կարող է նրա նկատմամբ ավելի խիստ խափանման միջոց կիրառելու հիմք հանդիսանալ, իսկ գրավի ձևով խափանման միջոց կիրառված լինելու դեպքում այն կարող է վերածվել պետության եկամտի (Նախագծի 125-րդ հոդվածի 5-րդ մաս):

Նախագծի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում ամրագրված քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու երկրորդ հիմքը *մեղադրյալի ծանր հիվանդությունն է*:

¹¹ **Попов А. М.** Проблемы совершенствования оснований и условий приостановления предварительного следствия: Дисс. канд. юрид. наук. Саратов, 2004, էջ 73:

¹² **Закурова Э. Ф.** Приостановление предварительного следствия в случае, когда подозреваемый или обвиняемый скрылся от следствия либо место его нахождения не установлено по иным причинам: Автореф. дисс. канд. юрид. наук. Ижевск, 2004, էջ 19:

Գործող քրեական դատավարության օրենսգրքի համեմատությամբ կասեցման նշված հիմքը Նախագծում ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Այսպես, եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ) օրենսդիրը սահմանափակվում է միայն նշելով, որ քրեական գործով վարույթը կարող է կասեցվել, եթե *մեղադրյալը ծանր հիվանդ է*, ապա Նախագծում սահմանված է, որ քրեական հետապնդման ժամկետը կարող է կասեցվել, եթե *մեղադրյալի մոտ առկա է ծանր հիվանդություն, որը նրան տևական ժամանակով զրկում է վարույթին մասնակցելու հնարավորությունից:*

Այս առումով Նախագծի կարևոր ձեռքբերումներից մեկը կարելի է համարել այն, որ դրանում հստակ սահմանված է, որ ոչ բոլոր ծանր հիվանդությունները կարող են քրեական հետապնդման ժամկետի կասեցման հիմք հանդիսանալ, այլ միայն այնպիսիք, որոնք **տևական ժամկետով են** մեղադրյալին զրկում վարույթին մասնակցելու հնարավորությունից:

Դրանով հանդերձ, քննարկվող հիմքի հետ կապված Նախագծում իր լուծումը չի ստացել գործնականում և տեսական գրականության մեջ վեճերի տեղիք տվող այն հարցը, թե ինչպիսի փաստաթղթի հիման վրա պետք է հաստատվի մեղադրյալի մոտ ծանր հիվանդության առկայությունը:

Այս առումով ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում սահմանված է, որ մեղադրյալի մոտ ծանր հիվանդության առկայությունը պետք է հաստատված լինի բժշկական եզրակացությամբ: Համանման կարգավորում է նախատեսված Ուկրաինայի քրեական դատավարության նոր օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում:

Քննարկվող հարցի վերաբերյալ միասնական մոտեցում չկա նաև դատավարական իրավունքի տեսության մեջ: Ս. Մ. Կուրդիմյանը այն կարծիքին է, որ «ՌՍՖՍՌ քր. դատ. օր.-ի 195-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմքով նախնական քննությունը կասեցնելու մասին վերջնական որոշում կայացնելու համար բժշկի տեղեկանքը բավարար չէ: Այս դեպքում մեղադրյալի հիվանդությունը պետք է հաստատվի փորձագետի եզրակացությամբ»¹³:

Ս. Մ. Կուրդիմյանի տեսակետը պաշտպանում են նաև այլ դատավարագետներ: Այսպես, Բ. Գ. Ալիմջանովը առաջարկում է օրենքում ամրագրել դրույթ, ըստ որի՝ նշված հիմքով, անկախ հիվանդության տեսակից, քրեական գործով վարույթը կարող է կասեցվել միայն, եթե ստացվել է փորձագետի եզրակացությունը¹⁴:

Մ. Ե. Կորոլևի կարծիքով՝ մեղադրյալի հոգեկան կամ այլ ծանր հիվանդությունները պետք է հաստատվեն դատափորձական կամ դատաբժշկական բնագավառի փորձագետների եզրակացությամբ¹⁵:

Ի տարբերություն նշված տեսակետների՝ Վ. Ե. Գուշևը գտնում է, որ հոգեկան հի-

¹³ *Кургиян С. М.* Приостановление и возобновление предварительного следствия и прокурорский надзор за соблюдением законности в этой деятельности: Автореф. дисс. канд. юрид. наук. М., 1967. էջ 9-10:

¹⁴ Տե՛ս *Алимджанов Б. Г.* Раскрытие преступления задача следственных органов. Ташкент. 1975, էջ 41:

¹⁵ Տե՛ս *Королев М. В.* Приостановление предварительного следствия в связи с психическим или иным тяжким заболеванием обвиняемого. Автореф. дисс. канд. юрид. наук М., 1971, էջ 6:

վանդությունները միշտ պետք է հաստատվեն դատահոգեբանական փորձագետի եզրակացությամբ, իսկ այլ ծանր հիվանդությունները՝ բժշկական հաստատությունում աշխատող բժշկի եզրակացությամբ¹⁶:

Վ. Մ. Բիկովի կարծիքով՝ ՌԴ քրեադատավարական օրենքը պահանջում է, որ կասածյալի կամ մեղադրյալի հիվանդության փաստը հաստատված լինի բժշկական եզրակացությամբ՝ չբացառելով այդ դեպքում բժշկական և դատահոգեբանական փորձաքննությունն նշանակելու հնարավորությունը¹⁷:

Այսպիսով, ելնելով տեսական գրականության մեջ տեղ գտած մոտեցումներից, կարծում ենք, որ Նախագծի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նախատեսված քրեական հետապնդման ժամկետի կասեցման հիմքը պետք է ներկայացվի հետևյալ ձևակերպմամբ. «Մեղադրյալի մոտ առկա է ծանր հիվանդություն, որը նրան տևական ժամանակով զրկում է վարույթին մասնակցելու հնարավորությունից՝ այն պայմանով, որ այդ հիվանդությունը հաստատվել է համապատասխան բժշկական եզրակացությամբ»:

Նախագծի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդման ժամկետը կարող է կասեցվել, եթե **մեղադրյալի հետ կնքվել է համագործակցության համաձայնագիր**: Նախագծում քրեական հետապնդման ժամկետի կասեցման հիմքերի շարքում այսպիսի հիմքի նախատեսումը ամենից առաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ իրավական համակարգ առաջին անգամ ներմուծվում է նոր դատավարական ինստիտուտ, այն է՝ համագործակցության վարույթը, որը կիրառվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումը և դրանք կատարած անձանց պատասխանատվության անխուսափելիությունը ապահովելու նպատակով:

Նախագծի 464-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ «Համագործակցության վարույթի ընթացքում քննիչի միջնորդությամբ հսկող դատախազն իրավասու է տույն օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հիմքով կասեցնել մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը, եթե դա անհրաժեշտ է համաձայնագրով նրա ստանձնած պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու համար»:

Նախագծի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում ամրագրված քրեական հետապնդման ժամկետի կասեցման վերջին հիմքը **անհաղթահարելի ուժն է, որը ժամանակավորապես խոչընդոտում է վարույթի հետագա իրականացումը**: Կասեցման քննարկվող հիմքը նախատեսված է նաև գործող քրեական դատավարության օրենսգրքում (31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ), սակայն ինչպես գործող օրենսգրքում, այնպես էլ նախագծում բացահատված չէ «անհաղթահարելի ուժ» հասկացության բովանդակությունը, որը հանգեցնում է այն բանին, որ այդ հասկացությանը գործնականում հաճախ տրվում է տարածական մեկնաբանություն, և բոլոր այն դեպքերում, երբ ստեղծված իրավիճակը չի ներառվում կասեցման մյուս հիմքերի մեջ, մեկնաբանվում է որպես անհաղթահարելի ուժ և կասեցվում հենց այդ հիմքով: Պրակտիկայում տեղ գտած այդպիսի իրավիճակները բացառելու համար, կարծում ենք, Նախագծի 6-րդ հոդվածում նախատեսված հիմնա-

¹⁶Տե՛ս **Гуцеев В. Е.** Процессуальные вопросы приостановления производства по уголовному делу на предварительном следствии и в суде. Автореф. дисс. канд. юрид. наук М., 2000, էջ 9:

¹⁷Տե՛ս **Быков В. М.** Основания приостановления предварительного следствия по УПК РФ /В. М. Быков. //Государство и право. -2004. - № 5, էջեր 107-108:

կան հասկացությունների շարքում պետք է բացահայտվի նաև «անհաղթահարելի ուժ» հասկացության բովանդակությունը: Այս առումով ուղղորդող նշանակություն կարող է ունենալ Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը, որի 50-րդ հոդվածի ծանոթագրության համաձայն՝ *քրեական գործով հետագա վարույթը խոչընդոտող անհաղթահարելի ուժ ասելով պետք է հասկանալ բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակները, ռազմական կամ արտակարգ դրությունը:*

Այսպիսով, քրեական հետապնդման ժամկետի կասեցման առանձին հիմքերի վերաբերյալ Նախագծում տեղ գտած կարգավորումների կապակցությամբ մեր կողմից ներկայացվող առաջարկությունները միտված են դատավարական քննարկվող ինստիտուտը էլ ավելի կատարյալ դարձնելուն և այն հնարավոր հիմնախնդիրների վերացմանը, որոնք կարող են ծագել այդ հիմքերի գործնական կիրառության ընթացքում:

GROUNDS FOR SUSPENDING CRIMINAL PROSECUTION TIME LIMITS ACCORDING TO THE NEW DRAFT CRIMINAL PROCEDURE CODE

Arsen MARTIROSYAN

*Prosecutor of the Prosecutor's Office of Yerevan
Candidate of Legal Sciences*

The article reveals the essence of the institute for suspending criminal prosecution time limits stipulated in the new draft Criminal Procedure Code as well as theoretical and practical problems on the separate grounds constituting the content of this institute. In particular, the article analyzes the content of such grounds when the whereabouts of the accused are unknown, the accused is beyond the borders of the Republic of Armenia and avoids participating in the criminal proceedings, and presents the basic criteria for differentiating between those grounds. Within the article, the author discusses such a ground for suspending criminal prosecution time limits as the serious illness of the accused. In the author's view, although the new draft Criminal Procedure Code has made a step forward in terms of stipulating this ground in legislation as compared to the current Criminal Procedure Code, however, it doesn't define what kind of medical document will serve as a basis for proving the serious illness of the accused. Analyzing the views of the theoretical literature and the investigative practices, the author presents his own approach to the legislative stipulation of the discussed ground.

The article also reveals such a new ground for suspending criminal prosecution time limits as concluding an agreement with the accused.

ОСНОВАНИЯ ПРИОСТАНОВЛЕНИЯ СРОКОВ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ ПО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА

Арсен Мартиросян

*Прокурор прокуратуры г. Еревана,
кандидат юридических наук*

В статье раскрывается сущность закрепленного в проекте нового уголовно-процессуального кодекса института приостановления сроков уголовного преследования, а также теоретические и прикладные проблемы отдельных оснований приостановления сроков уголовного преследования, составляющих содержание названного института. В частности, анализируется содержание следующих оснований: не установлено место нахождения обвиняемого; обвиняемый находится за границей Республики Армения; обвиняемый избегает от участия в процессе. На основании этого анализа представляются основные критерии разграничения названных оснований.

В рамках статьи предметом обсуждения является также такое основание приостановления сроков уголовного преследования как тяжелое заболевание обвиняемого. По мнению автора, проект нового уголовно-процессуального кодекса, по сравнению с действующим уголовно-процессуальным кодексом, относительно законодательного закрепления данного основания, констатировал некоторый прогресс, однако в нём не определено, на основании какого медицинского документа устанавливается наличие у обвиняемого тяжелого заболевания. Анализируя точки зрения, отраженные в специальной литературе, и следственную практику предлагается авторский подход к законодательному закреплению обсуждаемого основания.

В статье раскрыто также содержание нового основания приостановления сроков уголовного преследования, закрепленное в проекте нового уголовно-процессуального кодекса – заключение соглашения сотрудничества с обвиняемым.

Բանալի բառեր – քրեական հետապնդում, քրեական հետապնդման ժամկետների կասեցում, մեղադրյալի վարույթին մասնակցելուց խուսափել, ծանր հիվանդություն, անհաղթահարելի ուժ

Keywords: criminal prosecution, suspension of the criminal prosecution delay, avoidance of participating in proceedings, serious illness, force majeure

Ключевые слова: уголовное преследование, приостановление сроков уголовного преследования, обвиняемый избегание от участия в процессе, тяжелое заболевание, непреодолимая сила